



COVID-19-ի Դեմ Պատվաստում. Pfizer կամ Moderna պատվաստանյութը ստանալուց հետո



Հազվադեպ հանդիպող, լուրջ կողմնակի ազդեցություններ

Ալերգիկ Ռակազդեցություններ

Ինչպես ցանկացած դեղորայքի դեպքում, հազվադեպ է պատահում, սակայն, հնարավոր է ունենալ լուրջ հակազդեցություն, ինչպես օրինակ՝ շնչադեղություն կամ խզոց, ցան կամ բշտիկներ, կոկորդի կամ լեզվի այտուցվածություն: Նման իրավիճակի տեղի ունենալը քիչ հավանական է: Սակայն, եթե դա տեղի ունենա, անհապաղ դիմեք բուժօգնության՝ զանգահարելով 911:

Միոկարդիտ և Պերիկարդիտ

Pfizer կամ Moderna պատվաստանյութով պատվաստվող որոշ մարդկանց մոտ՝ հիմնականում 12-ից 39 տարեկան տղամարդկանց շրջանում, կա միոկարդիտի (սրտամկանի բորբոքում) կամ պերիկարդիտի (սրտապարկի բորբոքում) շատ փոքր վտանգ: Ավելի ուշ (8 շաբաթ անց) պատվաստանյութի երկրորդ դեղաչափը ստանալը նվազեցնում է սրտի հետ կապված այս հազվադեպ խնդիրների վտանգը:

Անմիջապես դիմեք բուժօգնության, եթե ձեզ մոտ դրսևորվում է հետևյալ ախտանիշներից որևէ մեկը.

- Ցավ կրծքավանդակում
- Շնչադեղություն
- Արագ սրտխփոցի, սրտի անկանոն կամ ուժեղ բարբախի զգացողություն

Խնամք ստացած միոկարդիտով և պերիկարդիտով հիվանդների մեծամասնության առողջական վիճակը բարելավվել է դեղորայքի և հանգստի միջոցով, և նրանց ինքնազգացողությունը լավացել է:

Պատվաստման Հիմնական Կողմնակի Ազդեցությունները

- Պատվաստանյութը ստանալուց հետո առաջին 2 օրվա ընթացքում ձեզ մոտ կարող են դրսևորվել կողմնակի ազդեցություններ: Հիմնական կողմնակի ազդեցությունները կարող են ներառել ձեռքի ցավ կամ կարմրություն, ջերմություն, դող, մկանային ցավ, գլխացավ և հոգևածության զգացողություն:
- Դրանք կարող են սահմանափակել ձեր որոշ առօրյա գործողությունները, սակայն պետք է անհետանան մեկ կամ երկու օրվա ընթացքում:
- Դրանք առավել հաճախ դրսևորվում են երկրորդ դեղաչափից հետո: Կարևոր է ստանալ բոլոր առաջարկվող դեղաչափերը, նույնիսկ եթե նախորդ դեղաչափից հետո ձեզ մոտ դրսևորվել են կողմնակի ազդեցություններ, քանի դեռ պատվաստանյութ մատակարարողը կամ ձեր բժիշկը չեն հորդորել ձեզ չպատվաստվել:
- Պատվաստանյութի կողմնակի ազդեցությունները բնական են և նշան են, որ ձեր մարմինը սովորում է ստեղծել անվարակունակություն: Ոչ բոլորի մոտ են դրսևորվում դրանք:

Խորհուրդներ, որոնք կօգնեն կողմնակի ազդեցությունների ժամանակ

- Ձեր թևին դրեք մաքուր, սառը, խոնավ կտոր՝ ցավը թուլացնելու համար: Ձեռքի մարզանքը նույնպես կարող է օգնել: Ջերմություն ունենալու դեպքում շատ հեղուկ խմեք և կրեք թեթև հագուստ:
- Առանց դեղատոմսի վաճառվող դեղամիջոցները, ինչպիսիք են ացետամինֆենը (Tylenol®) կամ իբուպրոֆենը (Motrin® կամ Advil®), կարող են օգնել ցավի, ջերմության, գլխացավի կամ անհանգստության դեպքում:

Ե՛րբ զանգահարել ձեր բժշկին

- Կապ հաստատեք ձեր բժշկի հետ, եթե ունեք՝
- Կողմնակի ազդեցություններ, որոնք տևում են 2 օրից ավել
- Ախտանիշներ, որոնք հայտնվում են պատվաստումից ավելի քան 2 օր անց
- Հագ, քթահոսություն, կոկորդի ցավ կամ համի կամ հոտի նոր առաջացած կորուստ (քանի որ սրանք պատվաստման կողմնակի ազդեցություններ չեն)
- Ախտանիշներ, որոնք վատթարանում են կամ անհանգստացնում ձեզ



Գրանցվեք v-safe-ում՝ CDC-ի առողջական վիճակի ստուգման համակարգում

Եթե ունեք սմարթֆոն, ինդրում ենք գրանցվել vsafe.cdc.gov -ում՝ ցանկացած կողմնակի ազդեցության մասին CDC-ին տեղեկացնելու համար:



Ցանկանո՞ւմ եք իմանալ ավելին

Հավելյալ տեղեկությունների համար այցելեք <<Պատվաստման Կողմնակի Ազդեցությունները>> կայքէջ կամ սկանավորեք QR ծածկագիրը:




Պահեք ապահով տեղում ձեր պատվաստումների սպիտակ քարտը:

Դա ձեր պատվաստումների պաշտոնական գրանցումն է: Լուսանկարեք կամ պատճենեք այն:

Պատվաստումների գրանցման քարտի թվային տարբերակը կարող եք ձեռք բերել այստեղ՝ myvaccinerecord.cdph.ca.gov

Ձեր հաջորդ դեղաչափի ընդունումը նշանակված է հետևյալ օրը կամ դրանից հետո՝

___ / ___ / _____



COVID-19-ի դեմ լավագույն պաշտպանության համար դուք պետք է ստանաք պատվաստանյութի բոլոր առաջարկվող դեղաչափերը, ներառյալ խթանիչ(ներ)ը:

Թե ինչ պատվաստանյութ ստանալ և երբ ստանալ յուրաքանչյուր դեղաչափը՝ կախված է ձեր տարիքից, ձեր առողջական վիճակից և առաջին անգամ ստացած պատվաստանյութի տեսակից:

Լրացուցիչ մանրամասների համար այցելեք՝ ph.lacounty.gov/covidvaccineschedules.

Որտե՞ղ ստանալ ձեր հաջորդ դեղաչափը

Այցելեք ph.lacounty.gov/howtogetvaccinated կամ զանգահարեք Հանրային Առողջության Վարչության Չանգերի Կենտրոն՝ **1-833-540-0473** հեռախոսահամարով՝ ձեզ մոտիկ պատվաստման վայր գտնելու համար: Չանգերի կենտրոնը գործում է ամեն օր՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 8:30-ը:

Տեղեկատվությունը հասանելի է նաև բազմաթիվ լեզուներով՝ 24/7՝ զանգահարելով 2-1-1 հեռախոսահամարով: Սահմանափակ շարժունակություն ունեցող անձանց համար հասանելի են նաև անվճար փոխադրման և տնային պատվաստման ծառայություններ:

Տեղեկատվությունն թուլացած իմունային համակարգ ունեցող մարդկանց համար

Եթե ունեք միջին կամ խստորեն թուլացած իմունային համակարգ (օրինակ՝ արյան քաղցկեղ կամ ստանում եք քաղցկեղի դեմ ցանկացած բուժում, ունեցել եք օրգանների փոխպատվաստում կամ ունեք որոշակի աուտոիմուն խնդիրներ), պատվաստումը կարող է այդքան էլ արդյունավետ չլինել: CDC-ն www.cdc.gov-ի [ստանալ պատվաստանյութի լրացուցիչ դեղաչափեր](http://www.cdc.gov/immization): Խոսեք ձեր բժշկի հետ՝ դեղաչափերի ընդունման լավագույն ժամանակի մասին՝ հիմնվելով ձեզ համար վտանգների և ձեր բուժման ծրագրի վրա:

Դեղամիջոցներ COVID-19-ը բուժելու համար





Եթե դուք վարակվում եք COVID-19-ով և գտնվում եք ծանր հիվանդանալու [ավելի բարձր վտանգի](http://www.cdph.ca.gov/Programs/OPA/Pages/NR2020252.aspx) խմբում, կան դեղամիջոցներ, որոնք կարող եք ընդունել, որոնք *բուժում են* COVID-19-ը և կօգնեն ձեզ չհայտնվել հիվանդանոցում: Անմիջապես թեստավորվեք, եթե ունեք ախտանիշներ, նույնիսկ եթե դրանք մեղմ են: Եթե ձեր թեստի արդյունքը դրական է, և դուք ավելի բարձր վտանգի խմբում եք, անմիջապես դիմեք բուժօգնության:

Մի՛ հետաձգեք: Բուժումը պետք է սկսել հնարավորինս շուտ: ph.lacounty.gov/covidmedicines

Չոգեկան Առողջության Աղբյուրներ

Եթե դուք կամ ձեր ծանոթներից մեկը դժվարանում է հաղթահարել COVID-19-ը, օգնությունը հասանելի է 24/7 Լոս Անջելեսի Շրջանի Չոգեկան Առողջության Վարչության Օգնության Գծի միջոցով: Չանգահարեք 1-800-854-7771 հեռախոսահամարով կամ ուղարկեք «LA» հաղորդագրությունը 741741 համարին: Լրացուցիչ աղբյուրներ և գործիքներ կարող եք գտնել այստեղ՝ <http://dmh.lacounty.gov/resources>.

Ձեռնարկեք քայլեր՝ COVID-19-ից պաշտպանվելու և տարածումը կանխելու համար

-  **ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ** կանխում է ծանր հիվանդանալը
-  **ԴԻՄԱԿ ԿՐԵԼԸ** կանխում է վիրուսի տարածումը
-  Թեստավորումը թույլ է տալիս իմանալ՝ արդյո՞ք դուք վարակված եք և արդյո՞ք ձեզ անհրաժեշտ է մեկուսանալ
-  **ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԸ** օգնում են կանխել ծանր հիվանդանալը, եթե դուք վարակված եք

